ԶՈՐԱՇԵՆ

Վարչական ղեկավար՝ Սասուն Հարությունյան

Հեռ: 077 01 66 03

Մակերես՝ 31.8 կմ^2

Բնակչություն՝ 175

Ինդեքս՝ 2805

sas.harutyunyan.1990@mail.ru

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 21-22կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 39 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կարաքիլիսա, Կարաքլիս Երրորդ, Ղարաքիլիսա Զորի, Ղարաքիլիսա Նորանվանումները: Զորաշեն է վերանվանվել 1935 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը տեղադրված է Չիչկան գետի ձախափնյակում՝ մեղմաթեք սարալանջի վրա՝ ծովի մակարդակից 1970 մբարձրության վրա: Կլիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային

լեռնատափաստաններ են: Շրջակայքում կան աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում պահպանվել են 1863թ.-ին վերակառուցված եկեղեցին, 13-րդ դարի Ս.Ստեփանոս կիսավեր վանքը և բերդի մնացորդներ: Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 323, 1897թ.-ին՝ 712, 1926 թ-ին՝ 764, 1959 թ-ին՝ 295, 1970 թ-ին՝ 336, 1979 թ-ին՝ 304 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 198 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 31%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 16%: Ունի 53 տնտեսություն: Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (211հա), խոտհարքերը (43հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 234 և 1545 հեկտար: Անտառային հողերը զբաղեցնում են 138հա: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: